ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքի 2015 թվականի դեկտեմբերի 12-ին տեղի ունեցած ավագանու թիվ -11 նիստի

ՈՐՈՇՈՒՄ

2015 թվականի դեկտեմբերի 12-ին տեղի ունեցավ ավագանու նիստ, ավագանու 11 անդամներից նիստին մասնակցում էին 6-ը:
Նիստը վարում էր գյուղապետ՝ Վ.Պողոսյանը, արձանագրող՝ աշխատակազմի քարտուղար Ս.Սուքիասյան:
ՕՐԱԿԱՐԳ
<<Աղբյուրներ>>տարածքի ոռոգման ներքին ցանցի ապամոնտաժման թույլտվություն տալու մասին: /Զեկ. Վ.Պողոսյան/
Զեկուցողը ներկայացրեց, որ գյուղի աշխարհագրական դիրքի պատճառով անձրևաջրերը և սելավաջրերը հավաքելով ծառի տերևները և այլ առարկաներ, տեղափոխում են Մարտունի քաղաքի տարածք և այնտեղ ստեղծում են անհարմար ու հակասանիտարական վիճակ: Այդ վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է կառուցել սելավատար խողովակաշար:
<<Դեմեր>> գերեզմանատան ճանապարհը բազմիցս խճալցվել ու հարթեցվել է, սակայն ճանապարհաեզրերի առուների բացակայության պատճառով հաջորդող անձրևներից հետո հեղեղվում է ու նորից դառնում անանցանելի:
Այստեղ նույնպես անհրաժեշտ է կիսախողովակներով ճանապարհաեզրերի կառուցում:
Գեղհովիտի ներքին Չայիրներ թաղամասի համարյա բոլոր ճանապարհները դժվարանցանելի են կամ համարյա անանցանելի ամենուրեք ճանապարհներին հատվող ոռոգման առուների պատճառով: Հարցը կարգավորելու համար անհրաժեշտ է ճանապարհների և առուների հատման տեղերը զցել երկաթյա խողովակներ:
Նշված աշխատանքները կատարելու համար պահանջվում են մեծ գումարներ, որոնք գյուղապետարանի այսօրվա բյուջեն չի կարող ապահովել:
Առաջարկում եմ անհրաժեշտ քանակի խողովակներ ձեռք բերելու համար ապամոնտաժել դեռևս վաղուց չաշխատող պոմպակայանի բաշխից ցանցի խողովակաշարը , որն անիմաստ քայքայվում է հողի տակ կոռոզիայի միջոցով:
Զեկույցը քննարկելուց հետո ձայների կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 հարաբերակցությամբ ավագանին.
Որոշում է՝

1. Հավանություն տալ գյուղապետի առաջարկին և թույլատրել ապամոնտաժելու <<Աղբյուրներ>> տարածքի ոռոգման ջրատարի ներքին ցանցը և հանել անհրաժեշտ քանակի երկաթյա խողովակներ գյուղի ներքին մասում սելավատարի կառուցման,<<Դեմեր>> գերեզմանատան ճանապարհաեզրերի կիսախողովակների անցկացման և Ներքին Չայիրներ թաղամասի ճանապարհների կարգավորման համար:

ԱՎԱԳԱՆԻ
1. Ավագյան Լյովա
2. Թաթոսյան Գագիկ
3. Կարապետյան Հովհաննես
4. Հակոբյան Նաղաշ
5. Սահակյան Գնունի
6. Վարդանյան Գուրգեն

Գեղհովիտ համայնքի ղեկավար՝ Վ.Պողոսյան

Արձանագրող՝ Ս.Սուքիասյան